ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՆՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ղամբարյան Գ.Գ.
ԵՊՀ, ք.Երևան, Հայաստան, Ghambaryan.gg@mail.ru

Երկրի բևեռացված զարգացումը մտահոգիչ երևույթ է: Դրա արդյունքում ծնվում են մի շարք բացասական հետևանքներ: Իզուր չէ, որ աշխարհի երկրների մեծամասնությունը վարում է համահարթման քաղաքականություն՝ զարգացման տարածքային տարբերությունները մեղմացնելու նպատակով:

Բևեռացման և տարածաշրջանային զարգացման անհամամասնությունների ձևավորման պատճառները շատ են՝ տարածքի յուրացման բնականոն գործընթացներից մինչև ազատ շուկայական հարաբերությունների տնտեսական մրցակցային գործընթացները: Սակայն, որքան էլ պատճառները լինեն բնականոն ու գիտականորեն բացատրելի, այնուհանդերձ, հետևանքները ցանկալի չեն, սրում են հասարակական կյանքի բոլոր ոլորտների, հատկապես քաղաքական ու տնտեսական, լարվածությունն ու ծնում դժգոհություններ, անկայունություն, ճգնաժամեր, հակամարտություններ, գործազրկություն, աղքատություն:

Ներկայումս գրեթե բոլոր երկրները համոզված են, որ երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական տարածքային ամբողջականությանը սպառնացող տարածաշրջանային անհամամասնությունների դեմ պայքարը յուրաքանչյուր պետության պաշտպանական գործառույթներից է:

Սովորաբար տարբերում են տարածքային անհամամասնությունների երկու տեսակ՝ տնտեսական և սոցիալական, թեպետ դրանք սերտորեն կապված են մինյանց հետ:

Տնտեսական անհամամասնության հիմնական պատճառը տնտեսական գործունեության զարգացման բևեռացումն է: Տնտեսական գործունեությունը մշտապես կենտրոնանում է մրցակցային առավելություն ունեցող վայրերում: Իսկ մրցակցային առավելություններ ստեղծում են, ինչպես տարբերակում է «նոր տնտեսական աշխարհագրության» տեսաբան, Նոբելյան մրցանակակիր Պ. Կրուգմանը [6], «առաջին բնույթի» գործոնները, որոնք են բնական ռեսուրսների առկայությունը և բարենպաստ աշխարհագրական դիրքը, և «երկրորդ բնույթի» գործոնները, որոնք են ագլոմերացիոն արդյունքը, բարձր մարդկային կապիտալը, նպաստավոր ինստիտուցիոնալ միջավայրը, զարգացած ենթակառուցվաքները:

Տնտեսական տարածական կենտրոնացման միտումները գործում են ամենուր, անկախ երկրի զարգացման մակարդակից, միայն մեկ տարբերությամբ՝ զարգացած երկրներում որպես մրցակցային առավելություններ ձևավորում են առավելապես հասարակական գործունեության արդյունք հանդիսացող «երկրորդ բնույթի» գործոնները, իսկ զարգացող երկրներում՝ առավելապես «առաջին բնույթի» գործոնները:

ՀՀ-ում մրցակցային առավելություն ձևավորող գործոններն են ագլոմերացիոն արդյունքը (տնտեսում մասշտաբում), համաշխարհային շուկայում պահանջարկ ունեցող որոշ հանքային ռեսուրսների առկայությունը, մասնակիորեն՝ նաև մարդկային կապիտալը, էլ ավելի քիչ՝ հարմար աշխարհագրական դիրքը: Այդ է պատճառը, որ ՀՀ-ում հատկապես արագորեն են զարգանում Երևանը՝ որպես խոշոր ագլոմերացիա, լեռնահանքային, ռեկրեացիոն ռեսուրսներ, մարդկային կապիտալ ունեցող տարածքներն, հարմար ԱԴ ունեցող տրանսպորտային հանգույցներն ու ազատ տնտեսական գոտիները: Իսկ մրցակցային առավելություններ չունեցող տարածքները շարունակում են ետ մնալ նույնիսկ պետական զգալի աջակցության պայմաններում: Արդյունքում, ՀՀ-ում շարունակվում է էլ ավելի սրվել արդեն իսկ մտահոգիչ տնտեսական բևեռացումն:

Սոցիալական տարածքային անհամամասնություններն արդյունք են տնտեսականի: ՀՀ-ում սոցիալական ոլորտին ուղղված փաստացի ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերում կազմել է 47.7% (2017թ.) և ավելի՝ անցյալ տարիներին, այդ թվում, միայն սոցիալական պաշտպանությանը՝ 30.1% [4] (2017թ.): Այդքանով հանդերձ, ՀՀ-ում սոցիալական շերտավորման և տարածքային տարբերությունների համահարթման քաղաքականության հաջողությունները շոշափելի չեն: Բնակչության զբաղվածության, մեկ շնչի հաշվով եկամուտների, աղքատության մակարդակի և այլ սոցիալական ցուցանիշների տարածաշրջանային տարբերություններն նույնիսկ շարունակում են աճել (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Սոցիալական բարեկեցության մի շարք ցուցանիշներ ըստ մարզերի, 2016թ.

	Աղքատության հիմնական ցուցանիշները, 2016թ., %			Գոր-ծազրկ ու-թյան մակար-դակը, %	Միջին ամսական անվանա-կան աշխատա-վարձ, դրամ	Հաշվան-դամն երի թվաքա-նակը 2016, %	Կենսա թո-շակառ ու-ների թվաքա-նակը, %	Ընտանեկ ան և սոցիալակ ան նպաստ ստացող ընտանիքն երի քանակը	Ընտանեկան և սոցիալակա ն նպաստ ստա-ցող ընտանիք-ների տես. կշիռը ՀՀ նկատմամբ, %
	Ծայրա-հեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ-ների մեջ						
ՀՀ	1.8	29.4	100	18.0	174 445	6.1	14.0	106431	100
Ք.ԵՐԵՎԱՆ	1.9	24.9	28.2	29.1	189 393	5.7	15.7	17223	16.2
ԱՐԱԳԱԾՈՏՆ	0.6	15.7	2	5.9	115 549	5.8	12.2	5749	5.4
ԱՐԱՐԱՏ	1	26.9	7.8	9.2	145 431	7.2	12.8	8513	8.0
ԱՐՄԱՎԻՐ	1.5	30	9.8	11.6	150 680	4.6	11.2	5919	5.6

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	1	28.8	5.3	4.2	138 501	7.2	12.7	13365	12.6
ԼՈՌԻ	2.7	35.8	11.5	12.3	144 919	7.2	14.9	20132	18.9
ԿՈՏԱՅՔ	1.3	35.4	12.6	21.8	152 886	4.7	11.5	9521	8.9
ՇԻՐԱԿ	3.7	45.5	12.1	21.0	128 953	6.6	13.7	15134	14.2
ՍՅՈՒՆԻՔ	1.1	24.2	4	11.6	200 693	8.4	16.8	3634	3.4
ՎԱՅՈՑ ՁՈՐ	1.2	18.8	1.3	8.4	132 475	7.9	15.8	1958	1.8
ՏԱՎՈՒՇ	1.9	33.8	5.4	12.5	146 475	6.2	15.4	5283	5.0

Ըստ ԱՎԾ տվյալների [1,2]

Տնտեսական զարգացման տարածքային անհամամասնություններն ՀՀ-ում ևս զգալի են (աղյուսակ 2): Ի տարբերություն սոցիալական ոլորտի, տնտեսական հարաբերություններին ուղղված ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերի մասնաբաժինը բավականին խոցելի է, շուրջ 7% [4] (2017թ.): Նույն վիճակն է նաև համայնքային (ըստ մարզերի) բյուջետային ծախսերում, ուր տնտեսական հարաբերություններին բաժին է ընկնում ոչ ավել քան 3%-ը, հազվադեպ մարզերում՝ մինչև 9%-ը, Երևանում՝ 12.8%-ը [5] (2017թ.):

Աղյուսակ 2.

Տնտեսական բարեկեցության մի շարք ցուցանիշներ ըստ մարզերի

ՀՀ մարզեր և ք. Երևան	Ներքին արդյունքն, մլն դրամ		Ներքին արդյունքի կառուցվածքն, %		Ներքին արդյունքը բնակչության մեկ շնչի հաշվով, մլն դրամ		Ներքին արդյունքը բնակչության մեկ շնչի հաշվով՝ միջին հանրապետականի նկատմամբ, %	
	2015	2016	2015	2016	2015	2016	2015	2016
ՀՀ	5043633.2	5079864.6	100	100	1678637	1697645	100	100
Ք.ԵՐԵՎԱՆ	2686984.0	2962197.1	53.3	58.3	2505113	2756301	149.2	162.4
ԱՐԱԳԱԾՈՏՆ	172391.3	159365.6	3.4	3.1	1319995	1233480	78.6	72.7
ԱՐԱՐԱՏ	350007.8	331682.7	6.9	6.5	1348778	1282609	80.3	75.6
ԱՐՄԱՎԻՐ	337783.5	386146.1	6.7	5.7	1266055	1074929	75.4	63.3
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	217353.9	189541.1	4.3	3.7	935258	819460	55.7	48.3
ԼՈՌԻ	261890.9	229395	5.2	4.5	1156251	1028677	68.9	60.6
ԿՈՏԱՅՔ	310105.4	277701.2	6.1	5.5	1218489	1095901	72.6	64.6
ՇԻՐԱԿ	255409.2	209632.2	5.1	4.1	1043765	869122	62.2	51.2
ՍՅՈՒՆԻՔ	274940.6	269549.7	5.5	5.3	1966671	1936420	117.2	114.1
ՎԱՅՈՑ ՁՈՐ	61042.2	68570.1	1.2	1.4	1194564	1357824	71.2	80
ՏԱՎՈՒՇ	115724.4	96083.8	2.3	1.9	917719	768670	54.7	45.3

Ըստ ԱՎԾ տվյալների [3]

Սոցիալական և տնտեսական ցուցանիշների տարածքային տարբերություններն առավել բևեռացված ու հիմնախնդրային են ք. Երևանի և մարզերի միջև, քան մարզերի միմյանց միջև: Տնտեսական գործունեության կենտրոնացվածությամբ ու սոցիալական բարեկեցության մակարդակով ՀՀ-ն չափազանց միակենտրոն է: Երևանին է բաժին ընկնում ՀՆԱ-ի 58.3%-ը, արտահանման 50,8%-ը, ներմուծման 81,6%-ը (2016թ.): Մասնագիտական գնահատմամբ, Երևանի նման բևեռացմանը, բացի ագլոմերացիոն արդյունքից և մայրաքաղաքայնության գործոնից, նպաստում է նաև կառավարման

խիստ կենտրոնացվածության հանգամանքը: Ի հավելումն ասվածի, նշենք, որ ք. Երևանում է ապրում ՀՀ բնակչության 36,0, այլ քաղաքներում՝ 27,7, գյուղական բակավայրերում՝ 36,3%-ը (2017թ. սկիզբ, ԱՎԾ):

Այսպիսով, ՀՀ տարածքային անհամաչափ զարգացման հիմնախնդրի լուծումն ունի օրակարգային կարևորություն:

Զարգացման տարածքային անհամամասնությունների համահարթման համար ՀՀ-ն իրականացնում է ***համայնքային բյուջեների ֆինանսական համահարթման քաղաքականություն***:

ՀՀ-ում, ինչպես նաև ունիտար և զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրների մեծամասնությունում, գործում է կենտրոնացված կառավարման մոդելը և վերաբաշխման ռեգիոնալ քաղաքականությունը: Հայաստանի համայնքային բյուջեին, առանց պետական բյուջեից ստացվող պաշտոնական դրամաշնորհների, բաժին է ընկնում համախմբված բյուջեի 2,5% (2017)-ը, իսկ դրամաշնորհներով՝ 9,6%-ը [4]:

Համայնքների ողջ եկամուտներում սեփական եկամուտներին բաժին է ընկնում 25-40%-ը: Մնացածը լրացվում է համայնքներին տրվող դոտացիաների, նաև սուբվենցիաների և տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման միջոցների հաշվին:

Դոտացիաները 2017թ-ին կազմել են պետական բյուջեի մոտ 3%-ը, ավելի քան 48 մլրդ դրամ (2017): Դոտացիաների 28%-ը տրվել է Երևանին, ամենաքիչը՝ 2.1%-ը՝ Վայոց ձորին, Տավուշի և Արագածոտնի մարզերին՝ 5-ական %, Սյունիքի մարզին՝ 5.6%, մյուս մարզերին՝ մոտ 9-ական % [5]:

Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները կազմել են պետական բյուջեի մոտ 0.7%-ը, շուրջ 8.85 մլրդ դրամ [5]: Ողջ սուբվենցիաների 94.3%-ը տրվել է Երևանին, մնացածը չնչին չափաբաժիններով՝ մարզերին:

Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեներին տրամադրվել են նաև ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման համար ֆինանսավորման միջոցներ, որոնք կազմել են պետական բյուջեի մոտ 2.3%-ը, շուրջ 30.7 մլրդ դրամ [5]: Այս միջոցների շուրջ 98.8%-ը տրվել է Երևանին:

Երևանի բյուջեն կազմել է 72 479 070.0 հազ. դրամ, Գյումրիինը՝ 3,203,518.8, Վանաձորինը՝ 2,153,465.7 [5]: Այս ցուցանիշները մեկ անգամ ևս փաստում են զարգացման խիստ բևեռացվածության մասին:

Ինչպես ակնհայտ է դառնում վերոհիշյալ վերլուծությունից, թեպետ իրականացվող համահարթեցման քաղաքականությանը, առկա վերաբաշխման չափաբաժինները բոլորովին էլ չեն նպաստում տարբերությունների համահարթմանը: Երևանը լինելով զարգացման բևեռ, շարունակում է ստանալ առավելագույն պետական աջակցություն, դրանով իսկ էլ ավելի սրելով անհամաչափությունների տարբերությունները: Դրական կողմն այն է, որ թույլ համայնքներն պետական

աջակցության արդյունքում հնարավորություն են ստանում ինքնապահպանման և ինքնագործունեության:

Տարածքային անհամասնությունների մեղմացմանն է ուղղված նաև «***տարածքային բևեռների զարգացման քաղաքականությունը***»: Նպատակը՝ Երևանից բացի, այլ զարգացման բևեռների ստեղծումն ու դրանց պետական աջակցությունն է, որոնք հետագայում կնպաստեն հետամնաց հարակից տարածքների զարգացմանը: Սակայն, որքան էլ այս քաղաքականությունը խոստումնալից է և լայն տարածում գտած, ՀՀ-ում առկա են տարածքային կազմակերպման չմշակված սկզբունքներ: Որպես զարգացման երկրորդային քաղաքներ՝ բևեռներ ընտրվել են Գյումրին, Վանաձորը, Դիլիջանը և Ջերմուկը: Միայն այս քաղաքների զարգացումը չի կարող ապահովել ողջ ՀՀ համաչափ զարգացման խնդիրը: Հետևաբար, այս ոլորտում լուրջ աշխատանքներ են հարկավոր:

Եվ վերջապես, տարածքային անհամասնությունների մեղմացմանն է ուղղված նաև ***սահմանամերձ, բարձրլեռնային և առավել աղքատ շուրջ 225 համայնքների կառավարության կողմից առանձնակի ուշադրության արժանացումը***. նրանց տրվում են հարկային, վարկային, ինչպես նաև տարբեր ծրագրերում մասնակցության լրացուցիչ արտոնություններ:

Այսպիսով, տարածքային անհամաչափ զարգացման բավականին բարդ խնդրի լուծման համար հարկավոր է .

- նոր՝ գիտականորեն հիմնավորված, ռազմավարության մշակում,
- ՀՀ-ում տարածքների համաչափ զարգացման գնահատման տեսակետից տարբեր ֆինանսական միջազգային կառույցների և դոնորների միջոցներով իրականացվող ծրագրերի համակարգում,
- տարածքային սուբյեկտներում մրցակցային առավելությունների ստեղծում,
- համահարթման նոր մոտեցումների, չափաբաժինների հաշվառում,
- տարածքային կազմակերպման արդյունավետ մոդելների ստեղծում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2016թթ., http://www.armstat.am/file/article/poverty_2017_a_2.pdf
2. ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2017, http://www.armstat.am/am/?nid=82&id=1975
3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-դեկտեմբերին , http://www.armstat.am/am/?nid=82&id=2007
4. ՀՀ օրենքը «2017թվականի պետական բյուջեի մասին», ընդունված 08.12.2016թ.,
5. http://parliament.am/legislation.php?sel=show&ID=5651&lang=arm
6. ՏԿԶՆ, Տեղեկատվություն ՀՀ համայնքների (ըստ մարզերի) բյուջեների ծախսերի և եկամուտների վերաբերյալ, http://www.mtad.am/hy/budgetary-incomes/
7. Krugman P.R. (1991). Geography and Trade. Cambridge, MA: MIT Press.

THE PROBLEM OF DISPROPORTIONATE TERRITORIAL DEVELOPMENT OF RA AND THE WAYS TO ITS SOLUTION

Ghambaryan G.G., YSU, Ph. D. in Geography

Territorial disproportionality in the socio-economic development of Armenia is of disturbing scale, and the need to resolve it is an issue on the agenda. This paper considers a number of indicators of territorial disparities in the socio-economic development of the Republic of Armenia; the measures taken by the state to overcome them are discussed, the flaws of the regional policy are identified, and solutions are proposed.